Հայրապետականդ իշխանութեան. ապա մեզ ընդ այդ՝ որպիսի սէր, և որպիսի հարազատութիւն պարտ է ունել, այն քան դժուարին առ ասել, նա մանաւանդ որոյ գահակալ զԱստուածընտիր զՀայրդ տեսանեմք, 'ի Գահս Քահանայապետական՝ յոր ամփոփեալ են ցաւք բազմազան. Ճշմարիտ ասաց՝ և որ ասաց, Վիշտք և տխրութիւնք անձկութիւնք համբարձեալ գնան բազմին ընդ իշխանացելոյն իսկ յԱթոռն։ Բայց Դուք զամենայն առեալ եղեալ ունիք մեկուսի, անձնանուէր և մեծաւ ճգամբ անխոնջ աշխատիք 'ի լուսաւորութիւն ազգիս, և 'ի պայծառութիւն հայրենեացս. վասն զի թէ 'ի ներկայս լինելն Ձեր աստ, և թէ 'ի բացակայս, ջանք Ձեր էին երջանկացուցանել զկեանս բոլորեցունց, որ և այժմ 'ի նոյն տքնիք։ Արդարև ծնունդ երկանց մնաց ընտրեալ Դպրոցդ՝ անջնջելի է մեզ, բայց գործադրութիւնք նորին ակն յանդիման տեսանին. զի ահա նորոգեալ բարեկարգէք զեկեղեցիս, կառուցանէք զուսումնարանս, յաւելուլ ջանայք զթիւս ականաւոր անձանց, պատուէք զուսումնականս, խնամս տանիք տկարաց, հոգայք զկարևոր պէտս Նորահաստատ ուսումնարանաց, և միշտ խորհիք զապահովութիւն և զերջանկութիւն ապագային ազգիս. որոյ վասն երախտագէտ Հայկազեանն որդիք՝ թող երգեսցեն Ձեզ յաւերժանգիկն 'ի զրուատ զերգս վայելուչս։ Այլ, երանի դարուս՝ որ ունի զՀոգեհանճար զՀայրապետդ յաջորդ մեծին Գրիգորի Պարթևազնի. Երանի ազգիս՝ որ առ Հայրապետութեամբ Ձերով ունի վայելել և զերջանկութիւն. Երանի Եկեղեցւոյ՝ որ յաւուրս Ձեր զՍահակեան, զՄեսրովբեան և զՆերսիսեանց երանաւէտ դարուն տեսանէ զբարեզարդութիւն. Երանի Մանկանց՝ որ շնորհիւ Ձերով ունին ճաշակել զկատարեալն ուսումն. Երանի և Ուսումնարանաց որ յաւուրս Ձեր ճոխանան ուսմամբք։ Ստուգիւ մեծապանծ գործք Վեհ Օծութեանդ կանգնեն 'ի Հայաստան զկոթող փառաց խղճալի ազգիս։ Այլ և մեք, որ այսօր համախմբեալ զրուատեմք զքաջարթուն Հովուապետիդ մեծագործութիւնս, չե՛ն կեղծիկ փաղաքշական, այլ սէր ճշմարիտ, հարազատութիւն որդիական, և խնդութիւն՝ հոգևոր։ Զի որպէս 'ի մեծահանդէս մտից Յիսուսի յԵրուսաղէմ՝ եթէ ծերք և տղայք ըղէին զբարերարութիւնս Ովսաննայիւք, անշուշտ քարինք նաև հրեշտակք իջեալ յերկնից՝ հռչակէին զփառս նորա. նոյնպէս և մեք եթէ այսօր ներբողական զրուատիւք չյայտնէաք զուրախութիւն սրտից մերոց, բաւական են ներբողենիք զերահռչակ գործք Ձեր՝ ես և աշխատութիւն նորակառոյց չքնաղակերտ Ճեմարանիս՝ որում զակն պիշ ունին Հայրենիք մեր յուսումնասիրութիւն մանկանց 'ի մխիթարութիւն փառաւորոյս Հայաստանի, և որոյ զրուատիք ո՛չ այժմ և եթ՝ այլ և որդւոց յորդիս ճառեսցի. ոյր աղագաւ և մեր ուրախանալով ընդ բարեկաջող Դարձ և ընդ մեծափառ Տնօրինութիւն Ձեր՝ համախմբեալ մատուցանեմք զլիալիր գոհունակութիւն սրտից մերոց՝ Հօրդ բարերարի։ Եւ վասն մեծի Քահանայապետութեանդ՝ մաղթեմք յերկնուստ՝ քննեալ երանութեանցն պարգևատուութիւն, 'ի տրիտուր անխոնջ աշխատանացդ. և զի՝ որպէս և այժմ՝ ո՛չ իշխանութեամբ, այլ քաղցր խնամատարութեամբ իշխէք մեզ, նոյնպէս միշտ և յաւէտ զերապանծ բարեկարգութեամբ Ձերով իշխեսցէք սրտից մերոց. ամէն։

Գրիգոր Ուրարակիր Մատթէոսեան։

## ԱՌԱՔԵԼԱՊԱՏԻՒ ՎԵՀ ՀԱՅՐԱՊԵ՛Տ

Քրիստոսապսակ Մայրս մեր Ս. Էջմիածին ըստ հնոյ սովորութեան և ծիսից Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ յիրաւի այսօր ևս տօնէ սերկեան տօնս քաղցրաձայնութեամբ յատկեղ երգոց շարականաց. սակայն բա՛րէ, մի՞թէ որպէս յառաջն եռամեայ միջոցաւ Հայք անտարբեր, և ուրախառիթ օրս այս մեզ աննշան 'ի տարեկանացն։ Հայկազանց՝ ո՞չ արդեօք այսօր է յԱստուածահայր Մարգարէէն ուրախութեան և ցնծութեան համբաւեալ իսկ օր։ Եւ ահա՛ սիրտք մեր խորագոյն իմն ազդեն 'ի մեզ այսօր նոր առիթ խնդի անհամեմատ՝ որոց տեսին խանձարրապատ հնացեալ աւուրքն աննշանք. զի զի՛նչ նոր եւք վարդամատն արփենւոյն համակ ոսկեձեղուն նկարէ հիւսկէն զերկին կապուտակ, 'ի նոյն տիպ, և յաւէտ քան զայն հրաշացուցանէ և զայս աւուրբս տօն համանուանակցի Քոյոյ խաչաղէն նահատակին Քրիստոսի՝ Հայկեան զարմից ընտրեալ բարոյական Գլխոյդ գերփառունակ այս տօնահանդէս։

Յայս կացուրդ հանդիսիս հանուրց տենչալւոյ՝ տեսցեն հապա բիւրք յընդհանուրս քաղցրահայեաց աչաց մեծի Հօրդ, թէ ո՛րպէս խռնին յակումբ խումբք Հայորեայն. սակայն քաւ, մի՛ ումեք կարծել, որպէս 'ի խաղսն յՕլիմպիա, կամ թատերաց թէ յիղձ գան։ Սոքա ծնողասէր անխարդախ կաթինք սնուցեալք սիրական՝ զերախտագէտ սրտի վերաբերեալ 'ի զիտակին պարգեն նշան դրոշ ի դրոշ։ Ահանիկ աստ օթեւան շուք մեծարանք երախտաւորիդ առաջի. աստ բանին ծրարք անհամեմատ սիրոյ. աստ բովիձայք կընդրկանուէր մեր մաղթանաց նաև զեթեր բոյր 'ի բոյր։

Վեհափա՛ռ Տէ՛ր՝ նաւ զեղուն Ազգութեան մերոյ որ ընդ կոտտական ալիս Ովկիանու, ընդ խաւար տգիտութեան բռնազբօսեալ մոլորիւր ցարդ քնեալ ղեկավարացն անհոգութեամբ. ուր ուրեմն հմտագոյն նաւուղղիդ յանձն եղեալ 'ի վերուստ՝ 'ի լաւագոյն անդր արդէն զեփիւռն առնու բարենպաստ ընթացից. զի յոյս 'ի խաւարի նստելոց ծագեցեր՝ Արփիդ եթերաձեմ, և հնարաւոր եւք յանել Լաբիւրինթոսն մոլորելոց՝ որդւոց Մօր Հայաստանի ցուցար անկներե։

Այլ զի յորոց առ որս կենդանութեան պէտք են Վեհիդ զաղզաշէն ձեռնարկօք անխոչընդոտ պահել յանդուգն տանել, նա մանաւանդ փառաւորոյս Հայաստանի աղօթից սերնդոց երջանկութեան պատարուն յուսով զակաղձուն նաւս 'ի նաւահանգիստ վարել, զհրաշակերտ նորոգ ձեռնածնարանն առեալ Մայր Աթոռոյս, յորմէ աղբերաբար յորդեալ զմանուածացեալ փոխս ջրոց կենդանութեան յԱզգս Հայոց՝ շիջուցես զպասուք ազգութեան նոցին. որով որդւոց յորդիս յԱզգս մեր յաւերժացի յիշատակ մեծարելի անուան Ձերոյ յոսկեղէնիկ մատեանս բառացի գրուածեալ, և յաւէտ 'ի տախտակ սրտից Հայկազանց անջինջ դրոշմեալ։

Վասնորոյ պատկառելի և սրբազնազարդ կաճառ 'ի միմեանց խնկանուէր մաղթանացս 'ի ցոյց երախտագիտական զգացման, և զմեզ սոանձնեալ սերտ պարտաւորութեան՝ ընդ իս ձայնարկուք գոչեցո՛ւք կեցցէ՛, կեցցէ՛ անուաղ բարօրութեամբ Վեհափառ Հայրապետս ամենայն Հայոց Տէր Գէորգ ընդ երկայն աւուրս՝ յառողջութեան և 'ի ցնծութեան, յանդորրութեան և 'ի բարեբաջանիկ խաղաղութեան։ Յաւելցէ՛ Տէ՛ր զաւուրս կենդանութեան Նորա. և տացէ Նմա զկարողութիւն՝ 'ի լուսաւորութիւն և 'ի կրթութիւն, 'ի բարեկեցութիւն և 'ի յաղատաքայլ առաջադիմութիւն Ազգիս Հայոց. ամէն։

Աշ–ի. Բ.րր դ–––. Ո–––––մ. Ս. Աթ–––ոյ.

Երանոս Գէորգեան։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՄԵԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԱՄԵՆԵՐԱՆԵԱ՛Ն ՏԷՐ·

Օրս այս ահա՜ մեզ օր շարժառիթ ուրախութեան սրտից, օ՜ր նշանաւոր անսահման ցնծութեանս մերոյ, և մեծապայծառ տօնախմբութեան Վեհափառ անուան Ձերոյ՝ յանհաս 'ի վերնական Աջոյն ընտրելոյդ 'ի փոխանորդութիւն Աթոռոյ Հայրապետութեան սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչին Հայաստանեայց. յորում համախմբեալ որդեգրացս պարակցութեամբ համայն հօտ ուխտիս 'ի հանդիսի առ մաղթանաց անուանակոչութեան Ձերոյին Աստուածընտիր Վեհափառութեան, փառաւորութիւն յանձին բերեալ իբրև բերանս համերամ աշակերտակցացս՝ ներբողեմ 'ի ձայն բարեբանութեան զօր յիշատակի վեհափառ Անուան Ձերոյ, և շնորհաւորեմ զողջամբ վերադարձ Ձեր 'ի Գերագահ սրբարանս՝ 'ի Լուսաւորութիւն մանկանցս Սիոնի և 'ի բարեկեցութիւն համայն միաբանական ուխտի ընդհանրական Կաթուղիկէ սուրբ Էջմիածնի. ուստի և յոյժմեկ հանդիսի եկաւորութեան Ձերոյ՝ 'ի լուր համայն Հայկազնեայց հռչակեմք զմեծամեծարար շնորհս երախտեաց Ձերոց առ բոլոր ժողովուրդս մերազանց 'ի վիճակս Ռուսաստանեայց 'ի փոքու միջոցի եռամեայ հովուապետութեան Ձերոյ. որով բարձրացեալ Ձեր յԱթոռ ընդհանուր Հայրապետութեան ազգիս, արեգակնօրէն ծաւալեցիք զլոյս գիտութեան առ ամենայն ժողովուրդս քաղաքաց քաղաքաց, յորս տառապէին անկարող և անօգնական ազգ մեր կարօտք գիտութեան և շնորհաց իմաստութեան։

Ձեօք Վեհափառ Հայրապետ, և Ձերոյին շնորհիւ և ընդհանուր հրամանաւ կառուցան վարժարանք 'ի քաղաքս, կանգնեցան կացին դպրոցք 'ի գիւղօրայս, և հաստատեցան կրթարանք հոգևորականաց 'ի վանօրայս ազգիս. ուստի և առաքինական և ազգասիրական գործք Ձեր այսօրինակ 'ի զարգացումն ազգիս լուսաւորութեան՝ ո՛չ նմանօրինակ սրբոց Հայրապետացն մերոց Թարգմանչաց, այլ և գերազանց իսկ այո՛ քան զնոցին վաստակն գրաւորականս՝ քարոզի արդ 'ի համայնից զաչս 'ի գլուխս ունողաց և համճար 'ի միտս բանականին, համառօտութեամբքն առեալ՝ ուսումնարանաց և մշտնջենաւորութեամբ յիրաքանչիւր 'ի նոսին բարեկարգութեանց, որովք պահպանի և յառաջանայ ուսումն գիտութեան և զարգացման Հայկազնեայց մանկանց 'ի բարերաղդութիւն ընդհանուր Հայաստանի, յորս գիտութեամբն յառաջանան արուեստք, և արուեստիւք հարստութիւն և բարեկեցութիւն ժողովրդոց, և 'ի ձեռն նոցին՝ աճի սէր քրիստոնէական հաւատոյ և ջերմեռանդութիւն և միութիւն հոգեկան՝ առ Հայրապետական Աթոռ Ձեր և առ Ձեզ իսկ մշտնջենաւորապէս։

Ո՛չ և Աթոռս Ձեր և մեր իսկ բոլոր ուխտ հոգևորականաց զօրէ՛ք է ապաքէն 'ի շնորհաց այսօրինակ երախտեաց Ձերոց և փութոյ եռանդեան ազգասէր և ուսումնասէր սրտից Ձերոց.

Ուստի փառս վերառաքելով առ Ամենաբարձրեալն Աստուած, 'ի մաղթանաց ժամուս՝ ուխտիւք միաբանութեամբ և բոլոր հանդիսականացս, մաղթեմք 'ի նմանէ երկարել Ձեզ զաւուրս բազումս յամենացանկալի կեանս Ձեր՝ յառաքինական գործս բարութեան, 'ի բարերաղդութիւն մեր և բոլոր ազգիս լրութեան, և յերջանիկ Հայրապետութիւն ամենայն Հայոց. ամէն։

Աշ–ի. Բ. դ–––. Ո–––––մ. Ս. Էջմ–ծնէ

Մկրտիչ Յովակիմեան Շահնազարեանց։

Վեհ. Կաթողիկոսի 'ի Տփխիսոյ մեկնած օրը՝ "Հայկ. աշխարհ,, ամսագրոյ խմբագիր Պ. Ստեփան Ստեփանէ Հեռւեան ուշադրութեան արժանի ճառը մատուցած է Նորին Ս. Օծութեան։